Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-528-09.03.2023,28.04.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կինեմատոգրաֆիայի մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-302-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 16-րդ, 18-րդ եւ 19-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 23.1-րդ կետով.

«23.1) ներդրումների մասնակի վերադարձ (cash rebate)՝ ֆիլմարտադրողների կողմից ՀՀ ռեզիդենտ անձանցից ձեռք բերված ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների եւ ծառայությունների համար կատարված դրամական ծախսերի մասնակի հետ վերադարձ.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 1.1-ին կետով.

«1.1) ֆիլմարտադրության մեջ ներդված դրամական միջոցների մասնակի վերադարձը.»

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու եւ դադարեցնելու կարգն ու պայմանները,.

2) լրացնել նոր 3.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

3.1) հաստատում է ներդումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները.»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) ազգային մարմնի ներկայացված ներդրումների մասնակի վերադարձի մասին եզրակացությունների եւ վերադարձը տրամադրելու հիմքերի ուսումնասիրության տվյալների հիման վրա որոշում է կայացնում վերադարձը տրամադրելու կամ մերժելու, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու մասին.»:

2) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) իրականացնում է պետական բյուջեից եւ դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, ***ինչպես նաև սույն օրենքի 19-րդ հոդվածի***

առաջին և երկրորդ մասով սահմանված պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.1-րդ կետով.

«12.1) ուսումնասիրում է ներդրումները մասնակի վերադարձնելու, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն լիազոր պետական մարմնին՝ համապատասխան որոշում կայացնելու համար.»:

Հոդված 6. Օրենքի Գլուխ 6-ում՝

1) Վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

« ԳԼՈՒԽ 6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՄ ԴՐԱ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԵՏԳԱՆՁՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ»

2) 18-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը, մերժումը, դադարեցումը, հետգանձումը

1. Ֆիլմարտադրության նպատակով ներդրվող դրամական ծախսերի **10-ից 40** տոկոսը կարող է հետ վերադարձվել ՝ եթե.

1) ֆիլմարտադրողը ներդրումները վերադարձնելու հայտով դիմել է Ազգային մարմին,

2) առկա են ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերն հիմնավորող փաստաթղթերը,

3) ազգային մարմինը ներդրումների մասնակի վերադարձ տրամադրելու մասին իր դրական եզրակացությամբ դիմել է լիազոր պետական մարմին:

2. Ներդումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները սահմանում է Կառավարությունը:

3. Ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսումներում չի հաշվարկվում սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դրամագլխի հաշվին տվյալ ֆիլմարտադրությանը հատկացված ֆինանսական միջոցների չափով կատարված ապրաքների, ծառայությունների եւ աշխատանքների ծախսերը՝ առկայության դեպքում:

4. Ներդրումների մասնակի վերադարձ ստանալու հայտը մերժվում է, եթե՝

1) հայտնի են դարձել փաստեր, որոնք հավաստում են, որ ներկայացվել են **ոչ հավաստի** տեղեկություններ **կամ կեղծ փաստաթղթեր.**

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում **սույն** օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը իր գործունեության ընթացքում ոչնչացրել կամ վնասել է պետության պահպանության տակ գտնվող պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, հնագիտական օբյեկտները, խախտել է պետության կողմից հատուկ պահպանվող բնական տարածքի կամ օբյեկտի օրենսդրությամբ սահմանված ռեժիմը՝ առաջացնելով քրեական օրենսդրությամբ սահմանված խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս, կամ հրաժարվել է հատուցել հանրային կամ մասնավոր անձանց գույքին պատճառված վնասը կամ վերականգնել դրա նախկին վիճակը.

5) Ազգային մարմինը օրենսդրությամբ սահմանված վերահսկողության տվյալների հիմքով տվել է բացասական եզրակացություն:

5. Ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները հետ է գանձվում պետական բյուջե, եթե ազգային մարմնի **վերահսկողության** կամ այլ հիմնավորված փաստերով բացահայտվում է, որ սույն հոդվածի առաջին մասով սահմանված վերադարձ ստացած (ստացող) ֆիլմարտադրողը.

1) ներկայացրել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

3) ֆիլմարտադրության աշխատանքներում կատարել է վարչական կամ քրեական պատասխանատվություն նախատեսող արարք, որով պետությանը, իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատճառել է վնաս կամ հանգեցրել գույքի մասնակի կամ լրիվ ոչնչացման կամ կատարել է ֆիլմարտադրության իրավունք վերապահող փաստաթղթերով չնախատեսված և համապատասխան լիազոր մարմինների հետ չհամաձայնեցված արարք:

6. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում, դարադեցվում եւ պետական բյուջե է վերադարձվում լիազորված պետական մարմնի որոշումով՝ ազգային մարմնի եզրակացության կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

7. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը եւ ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկն ու ձեւաչափը, ինչպես նաեւ վերադարձը մերժելու, դադարեցնելու եւ պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) կարգերը սահմանվում է սույն օրենքի **7-րդ հոդվածի** 1-ին մասին 3-րդ կետով **նախատեսված** Կառավարության որոշումով:»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով ներդրումներ կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ մասնակի վերադարձ՝ համաձայն սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթների:».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամանակահատվածում առանց աշխատանքի թույլտվության մասնակցելու ֆիլմարտադրության աշխատանքներին՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 8. Սույն օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ֆիլմարտադրության ներդրումների մասնակի վերադարձի դրամական ծախսերը ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:»:

Հոդված 9. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված պահանջների խախտումը և սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և 5-րդ մասին 3-կետով սահմանված խախտումներն առաջացնում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 10. Օրենքի 28-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1.-րդ մասով.

«4.1. Մինչեւ սույն օրենքով սահմանված Ազգային մարմնի կազմավորումը ներդրումների մասնակի վերադարձի տրամադրման, մերժման եւ այդ գործընթացի դադարեցման հետ կապված գործառույթներն իրականացնում է լիազորած պետական կառավարման մարմինը:».

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենքով նախատեսված՝ Կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում»:

Հոդված 11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. **Սույն օրենքի դրույթները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ծագած հարաբերությունների նկատմամբ:**

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Պ-528-09.03.2023,28.04.2023-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կինեմատոգրաֆիայի մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-302-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 16-րդ, 18-րդ եւ 19-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 23.1-րդ կետով.

«23.1) ներդրումների մասնակի վերադարձ (cash rebate)՝ ֆիլմարտադրողների կողմից ՀՀ ռեզիդենտ անձանցից~~, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից,~~ ձեռք բերված ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների եւ ծառայությունների համար կատարված դրամական ծախսերի մասնակի հետ վերադարձ.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 1.1-ին կետով.

«1.1) ֆիլմարտադրության մեջ ներդված դրամական միջոցների մասնակի վերադարձը.»

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու~~,~~ եւ դադարեցնելու ~~եւ բողոքարկելու~~ կարգն ու պայմանները.».

2) լրացնել նոր 3.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

3.1) հաստատում է ներդումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները.»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) ազգային մարմնի ներկայացված ներդրումների մասնակի վերադարձի մասին եզրակացությունների եւ վերադարձը տրամադրելու հիմքերի ուսումնասիրության տվյալների հիման վրա որոշում է կայացնում վերադարձը տրամադրելու կամ մերժելու, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու մասին.»:

2) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) իրականացնում է պետական բյուջեից եւ դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, ~~***մոնիտորինգ (մշտադիտարկում).»***~~.***հնչպես նաև սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասով սահմանված պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն:***

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.1-րդ կետով.

«12.1) ուսումնասիրում է ներդումները մասնակի վերադարձնելու, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն լիազոր պետական մարմնին՝ համապատասխան որոշում կայացնելու համար.»:

Հոդված 6. Օրենքի Գլուխ 6-ում՝

1) Վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

« ԳԼՈՒԽ 6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՄ ԴՐԱ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԵՏԳԱՆՁՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ»

2) 18-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը, մերժումը, դադարեցումը, հետգանձումը

1. Ֆիլմարտադրության նպատակով ներդրվող դրամական ծախսերի ~~մինչեւ քսան~~ 10-ից 40 տոկոսը կարող է հետ վերադարձվել՝ եթե.

1) ֆիլմարտադրողը ներդրումները վերադարձնելու հայտով դիմել է Ազգային մարմին,

2) առկա են ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերն հիմնավորող փաստաթղթերը,

3) ազգային մարմինը ներդրումների մասնակի վերադարձ տրամադրելու մասին իր դրական եզրակացությամբ դիմել է լիազոր պետական մարմին:

2. Ներդումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները սահմանում է Կառավարությունը:»:

3. Ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսումներում չի հաշվարկվում սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դրամագլխի հաշվին տվյալ ֆիլմարտադրությանը հատկացված ֆինանսական միջոցների չափով կատարված ապրաքների, ծառայությունների եւ աշխատանքների ծախսերը՝ առկայության դեպքում:

4. Ներդրումների մասնակի վերադարձ ստանալու հայտը մերժվում է, եթե՝

1) հայտնի են դարձել փաստեր, որոնք հավաստում են, որ ներկայացվել են ~~անարժանահավատ~~ ոչ հավաստի տեղեկություններ կամ կեղծ փաստաթղթեր.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը իր գործունեության ընթացքում ոչնչացրել կամ վնասել է պետության պահպանության տակ գտնվող պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, հնագիտական օբյեկտները, խախտել է պետության կողմից հատուկ պահպանվող բնական տարածքի կամ օբյեկտի օրենսդրությամբ սահմանված ռեժիմը՝

առաջացնելով քրեական օրենսդրությամբ սահմանված խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս, կամ հրաժարվել է հատուցել հանրային կամ մասնավոր անձանց գույքին պատճառված վնասը կամ վերականգնել դրա նախկին վիճակը.

5) Ազգային մարմինը օրենսդրությամբ սահմանված վերահսկողության տվյալների հիմքով տվել է բացասական եզրակացություն:

~~54~~5. Ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները հետ է գանձվում պետական բյուջե, եթե ազգային մարմնի ~~մշտադիտարկման~~ վերահսկողության կամ այլ հիմնավորված փաստերով բացահայտվում է, որ սույն հոդվածի առաջին մասով սահմանված վերադարձ ստացած (ստացող) ֆիլմարտադրողը.

1) ներկայացրել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

3) ~~ֆիլմարտադրության աշխատանքների ընթացքում կատարել է ապօրինի գործողություն կամ այնպիսի գործողություն, որը հասցրել է գույքայի մասնակի կամ լրիվ ոչնչացման:~~ֆիլմարտադրության աշխատանքներում կատարել է վարչական կամ քրեական պատասխանատվություն նախատեսող արարք, որով պետությանը, իրավաբանական կամ ֆիզիկական անձին պատճառել է վնաս կամ հանգեցրել գույքի մասնակի կամ լրիվ ոչնչացման կամ կատարել է ֆիլմարտադրության իրավունք վերապահող փաստաթղթերով չնախատեսված և համապատասխան լիազոր մարմինների հետ չհամաձայնեցված արարք:

~~65~~6. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում, դարադեցվում եւ պետական բյուջե է վերադարձվում լիազորված պետական մարմնի որոշումով՝ ազգային մարմնի եզրակացության կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

~~76~~7. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը եւ ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկն ու ձեւաչափը, ինչպես նաեւ վերադարձը մերժելու, դադարեցնելու եւ պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) ~~եւ բողոքարկելու ընթացա~~կարգերը սահմանվում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով ~~սահմանված~~ նախատեսված Կառավարության որոշումով:»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով ներդրումներ կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ մասնակի վերադարձ՝ համաձայն սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթների:».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամանակահատվածում առանց աշխատանքի թույլտվության մասնակցելու ֆիլմարտադրության աշխատանքներին՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 8. Սույն օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ֆիլմարտադրության ներդրումների մասնակի վերադարձի դրամական ծախսերը ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:»:

Հոդված 9. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված պահանջների խախտումը և սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և 5-րդ մասին 3-կետով սահմանված խախտումներն առաջացնում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված ~~8~~10. Օրենքի 28-րդ հոդվածը՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1.-րդ մասով.

«4.1. Մինչեւ սույն օրենքով սահմանված Ազգային մարմնի կազմավորումը ներդրումների մասնակի վերադարձի տրամադրման, մերժման եւ այդ գործընթացի դադարեցման հետ կապված գործառույթներն իրականացնում է լիազորած պետական կառավարման մարմինը:».

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենքով նախատեսված՝ Կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են ~~մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:~~սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում»:

Հոդված ~~9~~11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքի դրույթները տարածվում են (գործում են) սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ծագած հարաբերությունների նկատմամբ:
2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Պ-528-09.03 2023-ԳԿ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետև՝ նախագիծ)վերնագիր	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելան	Նախագծի հոդված 1-ին, կետ 2-րդ	Հստակեցնել իրական շահառուի հանգամքը սահանելու հարցը, ինչով է տարբերվում գործող օրենքի շահառ եզրույթից: Հանել «, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից». բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ	Հոդված 3,	Հաշվի առնելով նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասի վերաբերյալ կառավարության	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելան		առաջարկը, համապատասխանեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի» կարգավորումներին և հանել «և բողոքարկելու» բառերը,		
4	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան		Նախագծի 6-րդ հոդվածի փոփոխությունով պայմանավորված լրացնել նոր 3.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. 3.1) հաստատում է ներդումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները.»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	Հոդված 5, 1-ին մաս,	Հանել, թողնել գործող դրույթը. այն է՝ Ազգային մարմինը «վերահսկում» է: Առաջարկը հիմնավորվում է այն հանգամանքով, որ այդ լիազորությունը հնարավորություն է տալիս Ազգային մարմնին ապահովել պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցների վերահսկողությունը, իսկ նախագծով փոխվող «մոնիտորինգ (մշտադիտարկում)» եզրույթի դեպքում հարց է առաջարնում, թե պետական ֆինանսները ոչ նպատակային օգտագործելու դեպքում ԱՄ լիազորությունները:	Ընդունվել է,	Ընդունվել

6.	Կառավարություն, ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 5, 1-ին մաս,	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5) իրականացնում է պետական բյուջեից եւ դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, *..., ինչպես նաև սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասով սահմանված պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողություն*;	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Թագուհի Ղազարյան	Հոդված 6, մաս 1	Խմբագրվող 18-րդ հոդվածի 1-ին մասում «մինչև 20 տոկոս» բառերը փոխարինել «10-ից 40 տոկոսը» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	Հոդված 6, մաս 2	Խմբագրվող 18-րդ հոդվածի 2-րդ մասում Հանել և խմբագրել. ցանկը պետք է նախապես սահմանված լինի և Ազգային մարմինը պետք է դիտարկի յուրաքանչյուր հայտի համապատասխանությունն առկա ցանկի հետ: Ֆիլմարտադրողն ի սկզբանե պետք է ծանոթ լինի նշված ցանկին, հետո նոր դիմի Ազգային մարմին, որը կստուգի այդ համապատասխանությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
9					
10	Կառավարություն	Հոդված 6,	Խմբագրվող 18-րդ հոդվածի 4-րդ մասում . հստակեցնել, պարզաբանման կարիք ունի թե ի՞նչ «անարժանահավատ փաստերի ու տեղեկությունների» մասին է խոսքը, ինչպե՞ս են դրանք հավաստելու: Դրույթն համապատասխանեցնել նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներին,	Ընդունվել է	Ընդունվել է

	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան		միաժամանակ, հոդվածի 6-րդ մասն անհրաժեշտ է նախատեսել որպես 5-րդ մասի 3-րդ կետ: Հաշվի առնել կառավարության առաջարկը. «արժանահատվատ տեղեկությունները» բառերը փոխարինել՝ «ոչ հավաստի տեղեկություններ կամ կեղծ փաստաթղթեր» բառերով:		
11.	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Հոդված 6, մաս 4	*Լրացնել նոր 5.1. կետ, հետևյալ բովանդակությամբ.* *5) Ազգային մարմինը օրենսդրությամբ սահմանված վերահսկողության տվյալների հիմքով տվել է բացասական եզրակացություն:*	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Կառավարություն	Հոդված 6, մաս 5	Խմբագրվող 18-րդ հոդվածի 6-րդ մասը համարակալել որպես 5-րդ մասի 3-րդ կետ. Հստակեցնել, քանի որ ֆիլմարտադրության ընթացքում սցենարական մտահղացմամբ պայմանավորված կարող են ոչնչացվել տարբեր ապրանքներ, ներառյալ՝ մեքենաներ:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	ԱԺ պատեամավոր Սիսակ Գաբրիելյան		Խմբագրվող 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 3) ֆիլմարտադրության աշխատանքներում կատարել է վարչական կամ քրեական պատասխանատվություն նախատեսող արարք, որով պետությանը, իրավաբանական ու ֆիզիկական անձին պատճառել է վնաս կամ հանգեցրել գույքի	Ընդունվել է	Ընդունվել է

			մասնակի կամ լրիվ ոչնչացման, կամ կատարել է ֆիլմարտադրության իրավունք վերապահող փաստաթղթերով չնախատեսված և համապատասխան լիազոր մարմինների հետ չհամաձայնեցված արարք:		
14.	Կառավարություն ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 6, Խմբագրվող 18-րդ հոդվածի 7-րդ մասում	հանել «և բողոքարկման ընթացակարգը » բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	Կառավարություն	Հոդված 7,	Խմբագրվող 21-րդ հոդվածի փոփոխություններում նախատեսել 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ . 3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամանակահատվածում առանց աշխատանքի թույլտվության մասնակցելու ֆիլմարտադրության աշխատանքներին՝ Կառավարության սահմանած կարգով:»,	Ընդունվել է	Ընդունվել է
16.	Կառավարություն, ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 8	Լրացնել նոր բովանդակությամբ հոդված. «**Հոդված 8.** Սույն օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով. «6. Սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ֆիլմարտադրության ներդրումների մասնակի վերադարձի	Ընդունվել է	Ընդունվել է

			դրամական ծախսերը ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:»: Նախկին 8-րդ հոդվածը համարակալել որպես հոդված 10.		
17.	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նոր հոդված 9	Լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. **Հոդված 9.** Սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված պահանջների խախտումը և սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և 5-րդ մասին 3-կետով սահմանված խախտումներն առաջացնում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	Կառավարություն	Հոդված 10 (8,9)	Նախատեսել անցումային դրույթներ, որոնց համաձայն անհրաժեշտ է սահմանել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման և դրանցից բխող գործընթացների իրականացման համար կպահանջվի առնվազն 6 ամիս:	Ընդունվել է	Ընդունվել է
19	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նոր Հոդված 10.	Խմբագրվող 28-րդ հոդվածում նախատեսել 2-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Սույն օրենքով նախատեսված՝ Կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:»:		
20	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	Նոր Հոդված 11. (9)	Սահմանել եզրափակից և անցումային դրույթ. «Հոդված 11. Եզրափակից մաս և անցումային դրույթ 1. Սույն օրենքի դրույթները տարածվում են (գործում են) սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ծագած հարաբերությունների նկատմամբ:»	Ընդունվել է	Ընդունվել է